ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> Հունվարի 2023թ. N ՄՈ/18 - Ա

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածի 81-րդ կետի պահանջը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի 2023 թվականի հունվարի 13-ի N ՎԳ/05/643-2023 գրությունը և «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացված մրցույթի մասնակից Վահե Նշանի Գևորգյանի 2023 թվականի հունվարի 11-ի դիմումը.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ս. Թովմասյան)՝ անհրաժեշտության դեպքում բողոքի քննարկմանը հրավիրել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի անդամին (անդամներին):
3. Հանձնաժողովին (Ս. Թովմասյան)՝ 5-օրյա ժամկետում բողոքի վերաբերյալ կազմել եզրակացություն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին, իսկ եզրակացության կրկնօրինակը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ 13.01.2023 **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

X

VERIFIED OCSP 13.01.2023 17:01:19 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2023 թվականի հունվարի 13-ի
N ՄՈ/---18--- - Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Սաթենիկ Թովմասյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական
Լիաննա Հարությունյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ_գլխավոր իրավաբան
Դավիթ Հովսեփյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ
Միհր Ասլանյան	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության փորձագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED OCSP 13.01.2023 16:31:14 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023